

Յուն. 6-ին ծննդեան և Մկրտութեան օրը վանքի մայր եկեղեցում հանդիսաւոր պատարազից յետոյ որ մատոյց Գեր. Գէորգ արքեպիսկոպոսը) Հայոց հոգևորականութիւնը հանդիսաւոր թափօրով որի զլուին էր անցել Վեհափառ Աթոռադիպոսը՝ զիմեց դէպի Կուր դեաի վերայ բազմաձ «Յորդանան»ը ուր և կատարուեցաւ Զրօրհնեաց հանգէսը: Թիֆլիսի տանեակ հազարաւոր բնակիչները հաւաքուած էին զեաի երկու ափերում: Միքայէլեան կամրջից ներքև և վերև, Հայոց և Ռուսաց Յորդանանի շուրջը: Նորին Ս. Օծութեան ներկայութիւնը: որ շնայելով իւր ախարութեան ամենայն սիրով հաճել էր մասնակցել հանդիսին, առանձին իմն շուք էր տալիս նորան, որ ինչպէս յայտնի է ոչ մի տեղ այնպէս փաստաւոր կերպով չէ կատարուում: Ինչպէս Թիֆլիսում: Խաչը ջրից հանեց Թիֆլիսի քաղաքազուխ Պ. Գ. Նւանդուլեանցը: Հանգէսը վերջանալուց յետոյ Վեհափառում ըստ սովորականին նախաձայ էր պատրաստուած տօնը շնորհաւորողներէ համար:

Յունուարի 13-ին երեկոյեան ժամը 4-ին Նորին Վեհափառութիւնը շրջապատուած հոգևորականներով և երգեցիկ խմբով իջաւ վեհարանից վանքի մայր եկեղեցին և Յովհաննէս Մկրտչի նախատօնակին ներկայ եղաւ:

Նորին Ս. Օծութեան Անուանակոչութեան օրը, յուն. 14-ին վանքի մայր եկեղեցում հանդիսաւոր պատարազ մատուցուեցաւ և Վեհափառ Հայրապետը մի հակիրճ քարոզ խօսեց: Եկեղեցական հանգէսը վերջանալուց յետոյ Նորին Ս. Օծութիւնը բազմաթիւ անձանց շնորհաւորութիւններն ընդունեց, այցելեցին ի միջի այլոց Թիֆլիսի կաթողիկոսական դեան. մայր Ռեյտէրը, ոստիկանապետ պ. Մաստիցկին, ամբողջ հոգևորական գասը, Թիֆլիսի քաղաքազուխ պ. Գ. Նւանդուլեանցը, Ներսիսեան զպրոցի հոգաբարձուներն և ուսուցիչները և այն: Նոյն օրը Մեակիսի բանտի բանտարկեալներին ճաշ տրուեցաւ Վեհափառ Հայրապետի հաշուին, որ զորա համար 100 ռ. էր նուիրել՝ այդ բանտի Հայոց եկեղեցու մէջ դանուղ Ս. Շուշանիկի դամբարանին ուխտի կրած ժամանակ:

ՄԵՏԵՆԱԳԵՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ:

Մայր Աթոռի մասնադարանի համար շնորհակալութեամբ ստացել ենք՝

1. «Սրբազան պատարագամատոյցք Հայոց» ի Հ. Յովսէփայ Վ. Գաթրճեանի Հրատ. ի Հ. Յակոբոս Վ. Տաշեանի Վ. Իեննա. 1897. Պ. Յովակիմ Զարալպաշեանից:
2. Մկրտիչ Էմինի երկասիրութիւնները Հայոց լեզուի, գրականութեան և պատմութեան մասին (1840—1855 թ.), Մոսկուա. 1898:— Լագարեան մեմարանի Տեսչութիւնից:
3. Յովհաննէս Մալխասեան— Հերոս Մորոտ 1. Թիֆլիս 1898: Հեղինակից:
4. Ոսկի բարեկամ: Է. Իսմէրտ — Երազագիրք. Բ. տպ. Գրեգոր քահանայ Մանգալունուց. Մասեճեադարանայէս՝ Գ. Վ. Յովակիմեան.

Հասցէն Въ Монастырскую Библиотеку, Эчмиадзинь.

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք:

Ս. Պատրիարք Հայրը զրեց գաւառային առաջնորդարաններուն, որ իրենց վիճակին մէջ զրտնուած օտար որբանոցներու որբերը յառաջիկայ Ծննդեան տօներուն առթիւ եկեղեցի բերուելու և խոստովանութեան ու Ս. Հաղորդութեան մասնակից ընել տալու համար ամէն հոգածութիւն ի գործ դնեն:

— Մարաշէն կը գրեն Պատրիարքարան թէ տեղւոյն որբանոցի որբերուն թիւը 80 ի բարձրացած է, Պատրիարքարանէ զրկուած նպաստին համար շնորհակալութիւն կը յայտնեն, և որբերուն համար զպրոցական գասագիրք կը խնդրեն: Ս. Պատրիարք Հայրը յանձնարարեց նորակազմ Գրեանկան յանձնաժողովին որ առաջին առթիւ Մարաշի որբանոցէն ուղուած զիբերը զրկուին:

— Մուշի կաթոլիկականներ ու բողոքականներ. — Մշոյ մէջ ընդամենը կան 30—40 կաթոլիկ ընտանիքներ, որոնք ինչպէս կը կարծուի, 1—1½ դար առաջ գատուած են եղեր Մայրենի եկեղեցիէն: Ունին իրենց յատուկ եկեղեցի մը, հիմնարկուած 1888-ին, Եկեղեցւոյ զիմաց, նոյն փողոցին մէջ: